ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22 mrgashen.kotayq@mta.gov.am

թիվ 238
21 օգոստոսի 2017թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Կ. Գուլոյան

Ի պատասխան Ձեր 2017 թվականի ապրիլի 14-ի թիվ 01/ 15.1/1607-17 գրության Ձեզ ենք ուղարկում Մրգաշեն համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր 3 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» օգոստոսի 2017 թվականի N 80

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 38-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Քնարիկ Աբրահամյանի դիմումը ուղղված Կոտայքի մարզպետին և Կոտայքի մարզպետի 2017 թվականի հուլիսի 26-ի թիվ 01/15.2/3306-17 գրություն *որոշում եմ.*

1. Սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից Քնարիկ Աբրահամյանին տալ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ շինարարական ապրանքներ ձեռք բերելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐԱՄՅԱՆ

2017թ. օգոստոսի 15
գ.Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» օգոստոսի 2017 թվականի N 81

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 38-Ն որոշմամբ՝ և հիմք ընդունելով Սամվել Սարգսյանի և Քնարիկ Պետրոսյանի դիմումները՝ *որոշում եմ.*

Սամվել Սարգսյանին և Քնարիկ Պետրոսյանին սոցիալական հատուկ արտոնություններ բյուջեի ծախսեր 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն հետևյալ չափով

1. Սարգսյան Սամվել	30 000/երեսուն հազար/ դրամ
2. Պետրոսյան Քնարիկ	50 000/հիսուն հազար/ դրամ
Ընդամենը	80 000 (ութսուն հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՐԱՄՅԱՆ

2017թ. օգոստոսի 15
Մրգաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնք,1-ին փ. շ. 22
mrgashen.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15 » օգոստոսի 2017 թվականի N 82

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշումը, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731- Ն որոշմամբ հաստատված պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետական կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի պահանջներով և այն հանգամանքը, որ Մրգաշեն համայնքի 5-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.0455հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության, 046-014 ծածկագրով հողամասի վրա Օնիկ Աբրահամյանի կողմից ինքնակամ կառուցված 3.2քմ պարիսպը և 175.4քմ օժանդակ շինությունը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չի հակասում թաղամասի կառուցապատման պլաններին և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝ *որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի 5-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.0455 հա մակերեսով բնակելի կառուցապատման նշանակության, 046-014 ծածկագրով, բնակելի կառուցապատման նշանակության հողամասի վրա Օնիկ Աբրահամյանի կողմից ինքնակամ կառուցված պարիսպը 3.2քմ և 175.4քմ օժանդակ շինությունը՝ համարել համայնքային սեփականություն:
2. Առաջարկել Օնիկ Աբրահամյանին օգտվել ուղղակի վաճառքի միջոցով գնման նախապատվության իրավունքից և 15-օրյա ժամկետում պարիսպի և օժանդակ շինության համար վճարելով 178.6քմ x 780 = 139308 դրամ, իսկ 455քմ հողամասի համար հողի կադաստրային արժեքը, որը կազմում է 455քմ x 1242դրամ= 565110 դրամ, սեփականության իրավունքով ձեռք բերել վերոնշյալ կառույցը և նրա զբաղեցրած հողամասը:
3. Դիմել ԱԳԿՊԿ-Ի Եղվարդի տարածքային ստորաբաժանում՝ օրենքով սահմանված կարգով համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՐԱՄՅԱՆ